ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«25» օգոստոսի, 2025թ.
Թիվ 02-Ո-25-009/04 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան_____

«ԱՊՊԱ+» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱՋՄԵՑ	Ի. Շահբազյան	Համապատասխանության ապահովման գործառույթի պատասխանատուի ժ/պ	08.08.2025	
ՍՏՈՒԳԵՑ	Հ. Ռաֆայելյան	Իրավաբանական բաժնի պետ	15.08.2025	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	22.08.2025	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 6
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ 7
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 8
6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 9
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ 11
8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 12
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 14
10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 16
11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 20
12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 21
13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ 21

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՊՊԱ+» ապահովագրության պայմանների (այսուհետ՝ Պայմաններ) նպատակն է սահմանել ապահովագրության օբյեկտի, ապահովագրական պատահարի, ապահովագրական հատուցման և այլ հասկացությունների սահմանումները, ինչպես նաև կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող գումարի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի, ապահովագրական պատահարի դեպքում՝ Կողմերի գործողությունների և ապահովագրական հատուցման հետ կապված այլ իրավահարաբերությունները:

1.2. Պայմանները մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքին, «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ՀԿ-ի (այսուհետ՝ Բյուրո) կանոններին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.3. «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ն սույն ապահովագրությունն իրականացնում է ՀՀ ԿԲ կողմից տրված թիվ ԱՊՈ0004(0033) լիցենզիայի հիման վրա՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի (Ապահովագրության տեսակները և դասերը) 2-րդ մասով (ոչ կյանքի ապահովագրություն) ամրագրված 10-րդ դասով՝ «Ցամաքային տրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն», որպես ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատության կամավոր ապահովագրություն:

1.4. Սույն Պայմաններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ և Բյուրոյի կողմից հաստատված կանոններով սահմանված իմաստով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով և Պայմաններով, իսկ Պայմանագրով և սույն Պայմաններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և Բյուրոյի կողմից հաստատված կանոններով (այսուհետ միասին՝ ԱՊՊԱ օրենսդրություն):

1.5. Սույն Պայմանների շրջանակում իրականացվող ապահովագրական հատուցումների սահմանաչափերը (ապահովագրական գումարը) և վնասի գնահատման մեթոդաբանությունն ու հատուցման կարգն իրականացվում է ԱՊՊԱ օրենսդրությամբ

սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով և սույն Պայմաններով:

1.6. Պայմանագիրը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

1.7. Սույն Պայմանների համաձայն՝ Ապահովագրության Պայմանագիրը կարող է կնքվել գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող անձի հետ:

1.8. Պայմանները կցվում են ապահովագրության Պայմանագրին/Վկայագրին (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը, և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ միասին նաև՝ Կողմեր), ինչպես նաև Լիազորված վարորդի համար, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են Պայմանագրով նախատեսել Պայմանների առանձին դրույթների փոփոխություն, չկիրառում կամ Պայմաններով չնախատեսված այլ դրույթներ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, ԱՊՊԱ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.9. Պայմաններն ուժի մեջ են մտնում 2025թ.-ի սեպտեմբերի 15-ից և համապատասխանաբար ուժը կորցրած են ճանաչվում Ընկերության Խորհրդի կողմից 21.10.2013թ.-ի թիվ 17/12 արձանագրությամբ հաստատված «Տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության» պայմանները:

1.10. Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:

1.11. Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական վեբ կայքում (www.silinsurance.am) ու բջջային հավելվածում:

2. ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1. Տերմիններ և հասկացություններ.

2.1.1. *Ընկերություն* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:

2.1.2. *Պայմաններ* - «ԱՊՊԱ+» ապահովագրության Պայմաններ:

2.1.3. *Ապահովագրող* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն:

2.1.4. *Ապահովադիր* - Ապահովագրողի հետ Պայմանագիր կնքած՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ,

պետական և տեղական ինքնակառավարման մարմին, օտարերկրյա (ոչ ռեզիդենտ) կազմակերպություն, ֆիզիկական անձ, ներառյալ օտարերկրյա քաղաքացի, որոնք գործունակ են:

2.1.5. *Ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր* - Ապահովագրողի և Ապահովադրի միջև երկկողմանի ստորագրված գրավոր համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց Տուժողին որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում) (բացառությամբ՝ Պայմաններով նախատեսված բացառությունների, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ), իսկ Ապահովադիրը պետք է վճարի Պայմանագրում հաշվարկված ապահովագրավճարը դրանում նշված չափով, կարգով և ժամկետներում: Պայմանագիրը կարող է կնքվել նաև Պայմանների 6.3. կետով սահմանված եղանակներից մեկով:

2.1.6. *Ապահովագրության օբյեկտ* - ապահովագրման ենթակա գույքային շահերը:

2.1.7. *Յամաբային տրանսպորտային միջոց (այսուհետ՝ ՏՄ)*– ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար *Ապահովադրին պատկանող* սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց, ***մասնավորապես՝ թեթև մարդատար ավտոմեքենա***, ***ավտոբուս***, ***միկրոավտոբուս***, ***բեռնատար ավտոմեքենա***, ***բեռնաուղևորատար ավտոմեքենա***, ***հիբրիդային ավտոմեքենա և էլեկտրամեքենա***: Սույն Պայմանների իմաստով ՏՄ չեն համարվում մոպեդները, մոտոցիկլերը, տրիցիկլերը և քվադրիցիկլերը:

2.1.8. *Ապահովագրական ռիսկ* - ապահովագրման ենթակա հնարավոր իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ընթացքում՝ կրելով հանկարծակի և պատահական բնույթ, ու կախված չլինելով Պայմանագրի Կողմերի կամ երրորդ անձանց կամքից:

2.1.9. *Ապահովագրական պատահար* - Պայմանագրով նախատեսված իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով (բացառությամբ Պայմանագրով կամ Պայմաններով նախատեսված դեպքերի) Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով և չափով:

2.1.10. *Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում)* - ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ընկերության կողմից Պայմանագրի հիման վրա Տուժողին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ:

2.1.11. *Ապահովագրական գումար* - Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրով նախատեսված Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափը:

2.1.12. *Ապահովագրավճար* – Պայմանագրով սահմանված չափով և Պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.1.13. *Լիազորված վարորդ* – պատահարի ժամանակ ՏՄ-ն օրինական հիմքով տիրապետող անձ:

2.1.14. *Տուժող* – ավտոտրասպորտային միջոցի օգտագործման հետևանքով ԱՊՊԱ օրենսդրությամբ նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած անձ, որը ԱՊՊԱ օրենսդրությամբ և Պայմաններով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև սույն ենթակետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում ԱՊՊԱ օրենսդրության համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք: Տուժողի մահվանից հետո նրա վերաբերյալ Պայմաններով սահմանված կարգավորումները տարածվում են նրա իրավահաջորդների վրա:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Պայմաններով ապահովագրության օբյեկտ են Ապահովադրի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված Պայմանագրով նշված ՏՄ-ի օգտագործումից բխող՝ Ապահովադրի քաղաքացիական պատասխանատվության հետ՝ Պայմանների 1.3 կետով նախատեսված դասին համապատասխան:

3.2. Սույն Պայմանների 3.1 կետով նախատեսված Պատասխանատվությունը ծագում է Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում ՏՄ-ի օգտագործման հետևանքով Տուժողին, Տուժողի ՏՄ–ին կամ գույքին հասցված այն վնասի մասով, որը, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններով, ենթակա է կարգավորման «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, Բյուրոյի կանոնների և Պայմանագրի համապատասխան դրույթներով, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ՏՄ-ի

օգտագործմամբ կամ երբ ՏՄ-ի վարորդը մասնակի է մեղավոր (պատահարում առկա է նաև այլ անձանց մեղավորությունը):

4.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Ապահովագրողն իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրությունը (ԱՊՊԱ+) Պայմաններում նշված ապահովագրական ռիսկերից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.2. Սույն Պայմանների համաձայն՝ «ԱՊՊԱ+» ապահովագրության դեպքում ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և (կամ) Լիազորված վարորդի կողմից Պայմանագրի գործողության ընթացքում ՏՄ-ի օգտագործման հետևանքով Տուժողին (Տուժողներին) հետևյալ վնասների պատճառումը.

4.2.1. անձնական վնասներ, որոնք ներառում են Տուժողի (Տուժողների) առողջությանը պատճառված վնասները, ինչպես նաև Տուժողի մահվան դեպքում հուղարկավորության հետ կապված ծախսերն ու կերակրողին կորցրած անձանց պատճառված վնասները. հատուցման ենթակա չեն Տուժողի (Տուժողների) առողջությանը պատճառված վնասների հետևանքով վերջին(ներ)իս կորցրած աշխատավարձը (եկամուտները),

4.2.2. գույքային վնասներ, որոնք ներառում են Տուժողի (Տուժողների) ՏՄ–ին (ՏՄ–ներին) պատճառված վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, ինչպես նաև Տուժողին (Տուժողներին) պատկանող այլ գույքի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը՝ բացառությամբ վնաս պատճառող ՏՄ–ին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և Տուժողին սեփականության իրավունքով պատկանող գույքի:

4.3. Սույն Պայմանների համաձայն՝ «ԱՊՊԱ+» ապահովագրության դեպքում, Տուժողին հատուցվում է Ապահովադրի կամ Լիազորված վարորդի կողմից պատճառված վնասի՝ Տուժողի ԱՊՊԱ Պայմանագրով հատուցվող առավելագույն գումարի գերազանցող մասը, բայց ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը:

4.4. Եթե անձնական և/կամ գույքային վնասներ են կրել մեկից ավելի անձինք, ու այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված ապահովագրական գումարը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրական գումարի սահմաններում՝ Տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական պատահարի

արդյունքում պատճառված ընդհանուր վնասի մեջ իր կրած անձնական և/կամ գույքային վնասի համամասնությամբ:

4.5. Սույն Պայմանների 4.2-րդ կետով սահմանված վնասներից բացառություն են կազմում՝

4.5.1. անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

4.5.2. ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

4.5.3. վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

4.5.4. Տուժողի դիտավորության հետևանքով տվյալ Տուժողին պատճառված վնասները,

4.5.5. պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,

4.5.6. արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ մետաղներին պատճառված վնասները,

4.5.7. բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,

4.5.8. Պայմանագրով նախատեսված այլ վնասները,

4.5.9. ԱՊՊԱ օրենսդրությամբ նախատեսված այլ վնասները:

4.6. Սույն Պայմանների իմաստով Տուժող չեն համարվում և դրա շրջանակներում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում.

4.6.1. ՏՄ-ի սեփականատերը, Լիազորված վարորդը, Ապահովադիրը,

4.6.2. ՏՄ-ի սեփականատիրոջ կամ վարորդի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով:

4.6.3. Տվյալ պատահարում մեղավորությունն ընդունած կամ մեղավոր ՏՄ–ի հետ պատահարին մասնակից Տուժող ՏՄ–ի սեփականատերը (կամ միջոցներից մեկի), եթե այդ տրանսպորտային միջոցները (կամ միջոցներից մեկը) որևէ փոխազդեցության մեջ չեն (չի) մտել, այսինքն՝ պատահարը եղել է անհպում:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

5.1. Ապահովագրական գումարի և Ապահովագրավճարի չափը սահմանվում են Պայմանագրով:

5.2. Յուրաքանչյուր ապահովագրական պատահարից հետո ապահովագրական գումարի չափը նվազում է Տուժողին (Տուժողներին) վճարված ապահովագրական հատուցման գումարի չափով: Սակայն Ապահովադրի ցանկությամբ կարող է նվազած ապահովագրական գումարը վերականգնվել Պայմանների 6.3. կետով սահմանված ձևով Պայմանագրին կից համաձայնագրի (հավելվածի) երկկողմանի կնքմամբ՝ Ապահովագրողի կողմից հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճարը Ապահովադրի կողմից նախապես վճարվելու պայմանով:

5.3. Ապահովագրավճարը Կողմերի համաձայնությամբ կարող է վճարվել միանվագ կամ տարաժամկետ, որի վճարման չափը, կարգն ու ժամկետները սահմանվում են Պայմանագրով: Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները Ապահովադրի կողմից խախտվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի, առանց ծանուցման, լուծել Պայմանագիրը վճարման ենթակա ապահովագրավճարի համապատասխան չափի վճարման համար սահմանված վերջնաժամկետն ավարտվելու հաջորդ օրվանից:

5.4. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի, առանց ծանուցման, լուծել Պայմանագիրը սույն կետով սահմանված ժամկետին հաջորդող 5-րդ օրվանից սկսած, եթե Պայմանագրով այլ ժամկետ սահմանված չէ:

5.5. Եթե Պայմանագրով նախատեսվել է ապահովագրավճարի տարաժամկետ վճարման պարտավորություն, և ապահովագրական հատուցում տրամադրելու օրվա դրությամբ ապահովագրավճարն ամբողջությամբ կամ դրա հերթական մասը վճարված չէ, ապա Ապահովագրողը հատուցվող գումարը կարող է նվազեցնել չվճարած ամբողջ ապահովագրավճարի չափով՝ անկախ Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ժամկետներից:

5.6. Ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելու պարտականությունից և իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրն ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահի դրությամբ ապահովագրավճարի վճարման գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմաններով ապահովագրման ենթակա է սեփականության վկայականի, վարձակալության կամ լիզինգի Պայմանագրի հիման վրա, ինչպես նաև ՀՀ

քաղաքացիաիրավական օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով շահագործման ենթակա գործող ԱՊՊԱ Պայմանագիր ունեցող ՏՄ-ն:

6.2. Ապահովագրողի համար Պայմանագրի կնքման համար կարող է հիմք հանդիսանալ Ապահովադրի բանավոր հայտը կամ նրա կողմից լրացված դիմում-հարցաթերթիկը (որը տրամադրվում է Ապահովադրի կողմից):

6.3. Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: Պայմանագիրը կարող է կնքվել նաև էլեկտրոնային եղանակով՝ հաստատված երկու կողմերի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, կամ Ապահովագրողի առցանց էլեկտրոնային հավելվածի միջոցով, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված Պայմանագիրը:

6.4. Ապահովադիրը Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ՝ սույն Պայմաններով նախատեսված տվյալները ներկայացնում է դրանց հնարավորինս թարմացված, ճշգրիտ, պարզ ու հավաստի տարբերակով:

6.5. Պայմանագրին կից կարող են թողարկվել համաձայնագրեր կամ հավելվածներ, որոնք հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

6.6. Երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքված Պայմանագրի կորստի կամ վնասվածքի դեպքում Ապահովագրողը, Ապահովադրի դիմումի համաձայն, վերջինիս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը՝ նման դիմում ներկայացվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6.7. Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

6.8. ՏՄ-ի նկատմամբ իրավատիրոջ իրավունքները (սեփականության, վարձակալության, լիզինգի իրավունք և այլն) Ապահովադրից այլ անձի անցնելու դեպքում Պայմանագրով ձեռք բերված իրավունքներն այլ անձի անցնում են միայն Ապահովագրողի համաձայնությամբ, որի վերաբերյալ Ապահովագրողի, Ապահովադրի և համապատասխան անձի միջև եռակողմ ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվում է համապատասխան փաստաթուղթ, որը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

6.9. Եթե ՏՄ-ի նկատմամբ իրավատիրոջ իրավունքները (սեփականության, վարձակալության, լիզինգի իրավունք և այլն) Ապահովադրի կողմից փոխանցվել է այլ անձի, ինչի մասին Ընկերությունը գրավոր ձևով չի տեղեկացվել, ինչպես նաև առկա չի եղել Պայմանների 6.8 կետով նախատեսված Ընկերության համաձայնությունը, ապա ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական հատուցման պահանջը ենթակա է մերժման:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

7.1. Պայմանագիրը դադարում է.

7.1.1 Եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը:

7.1.2 Եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով:

7.1.3 Եթե մահացել է ֆիզիկական անձ Ապահովադիրը կամ լուծարվել է իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրը:

7.1.4 Եթե Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափով:

7.1.5 Եթե տեղի է ունեցել Տուժողի ՏՄ-ի կորուստ ոչ ապահովագրական պատահարի պատճառով:

7.1.6 Եթե առկա է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությունը:

7.1.7 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ ծանուցելով մյուս Կողմին՝ պայմանով, որ հրաժարման պահին Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը չի վերացել:

7.1.8 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում: Սույն Պայմանների իմաստով Պայմանագրի էական խախտում է համարվում Պայմանագրով և Պայմաններով նախատեսված պարտավորությունների ցանկացած խախտում:

7.1.9 Պայմանագրով կամ Պայմաններով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

7.2. Պայմանների 7.1.1 և 7.1.5 կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին ապահովագրավճարի գումարը չի վերադարձվում:

7.3. Պայմանների 7.1.2, 7.1.3, 7.1.4 և 7.1.7 (Ապահովագրողի նախաձեռնության դեպքում) կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին (իրավահաջորդին) վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, եթե Պայմանագրից հրաժարվելու պահին ապահովագրական որևէ պատահար չի գրանցվել կամ հայց չի ներկայացվել:

7.4. Պայմանների 7.1.6 և 7.1.7 (Ապահովադրի նախաձեռնության դեպքում) կետերով նախատեսված հիմքերով Պայմանագիրը դադարելու դեպքում Ապահովադրին վերադարձվում է ապահովագրավճարը՝ համաձայն ստորև նշված բանաձևի՝

ԱՎ = 0,8*ԱՊ*ՊՉ/Պ,

որտեղ՝

ԱՎ - Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճար,
ԱՊ - Պայմանագրով սահմանված ապահովագրավճար,
ՊՉ - Պայմանագրի գործողության չլրացած օրերի քանակ,
Պ - Պայմանագրի գործողության օրերի քանակ:

7.5. Պայմանագիրը Պայմանների 7.1.8. կետով նշված հիմքով Ապահովադրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե դրանում նշված էական խախտման փաստն ապացուցվել է Ապահովադրի կողմից, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ստացված ապահովագրավճարների և վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը: Էական խախտման փաստն Ապահովադրի կողմից չապացուցվելու դեպքում կիրառվում է Պայմանների 7.4 կետով նախատեսված կարգավորումը:
7.6. Պայմանագիրը Պայմանների 7.1.8. կետով նշված հիմքով Ապահովագրողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովադրի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների էական խախտման հիմքով, ապա ապահովագրավճարը չի վերադարձվում:

8. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

8.1. Պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը պարտավոր են.

8.1.1. Պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին Պայմանագրում նշված հեռախոսահամար(ներ)ով հետևյալ ժամկետներում.

8.1.1.1. Պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի մահվան դեպքում՝ պատահարի պահից 30 օրվա ընթացքում,

8.1.1.2. Պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի առողջությանը վնաս պատճառված լինելու դեպքում՝ պատահարի պահից 3-

օրվա ընթացքում՝ պայմանով, որ տվյալ պատահարի հետևանքով առողջությանը վնաս պատճառված անձը պատահարի պահից 3 ժամվա ընթացքում, տվյալ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների հետ կապված, դիմել է (ինքնուրույնաբար կամ նրան տեղափոխել են) բժշկական հաստատություն, որի վերաբերյալ ապացույցները ներկայացնելու պարտակա-նությունը կրում է Ապահովադիրը:

8.1.1.3. Պայմանների սույն կետի 8.1.1.1 և 8.1.1.2 ենթակետերով չնախատեսված դեպքերում՝ պատահարի պահից 40 րոպեի ընթացքում:

8.1.2. Ապահովագրողին հեռախոսազրույցի ժամանակ հնարավորության դեպքում հայտնել.

8.1.2.1. Պատահարում ներգրավված ՏՄ-ների հաշվառման համարանիշերը, վարորդ-ների տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, վարորդական իրավունքի վկայականը), ինչպես նաև իրենց հայտնի ցանկացած այլ տվյալ, որը կարող է նշանակություն ունենալ պատահարի առաջացման պատճառները պարզելու համար:

8.1.2.2. Պատահարի ընդհանուր նկարագրությունը (Ապահովագրողի պահանջի դեպքում):

8.1.3. Ողջամիտ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման կամ նվազեցման համար, ինչպես նաև ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը այլ կողմերի հետ հարաբերություններում:

8.1.4. Չստանձնել որևէ պարտավորություն կամ չընդունել որևէ պատասխանատվություն կամ մեղավորություն կամ չստորագրել որևէ փաստաթուղթ կամ չկատարել որևէ առաջարկ, խոստում կամ վճարում կամ որևէ ծախս՝ առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով տրամադրել պատահարի հանգամանքների պարզմանն ուղղված օժանդակություն և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

8.1.5. Գործել ի շահ Ապահովագրողի:

8.2. Ապահովադիրը պարտավոր է նաև՝

8.2.1. Ապահովագրողին վերջինիս պահանջով տալ լիազորագիր դատարանում կամ պետական այլ մարմիններում Ապահովադրի շահերի ներկայացման համար:

8.2.2. Տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել Պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղա-քացիական, քրեական կամ վարչական գործ/վարույթ հարուցվելու վերաբերյալ և

ներկայացնել նման գործ կամ վարույթ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր:

8.2.3. Ապահովագրողին տրամադրել ապահովագրական պատահարի վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

9.1. Պատահարի տեղի ունենալուց հետո 3-ամսյա ժամկետում Ապահովադիրը կամ Տուժողը Ընկերությանը պետք է ներկայացնի հայցային դիմում: Սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողին գրավոր հայցային դիմումը և/կամ Պայմանների 9.2. կետում նշված փաստաթղթերը չներկայացնելը կամ թերի ներկայացնելը ապահովագրական հատուցումը մերժելու հիմք է, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմում ներկայացրած անձը Պայմանների 9.3. կետով սահմանված կարգով ներկայացրել է հայցային դիմումը և/կամ կից փաստաթղթերը ուշ ներկայացնելու պատճառներ, որոնք Ապահովագրողի կողմից հարգելի են համարվել:

9.2. Հայցային դիմումին կից, բայց ոչ ուշ, քան պատահարից հետո 3 ամսվա ընթացքում, պետք է ներկայացվեն ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերն ու ապացույցները.

9.2.1. Տուժողի անձնագիրը, հանրային ծառայությունների համարանիշը կամ ՀԾՀ հատկացնելու կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքը, Տուժողի ՏՄ–ի հաշվառման վկայագիրը, իսկ այլ գույքի դեպքում՝ իրեն պատկանելու փաստը հաստատող փաստաթուղթ:

9.2.2. ՏՄ-ի հաշվառման վկայագիրը կամ սեփականությունը հիմնավորող այլ փաստաթուղթ:

9.2.3. ՏՄ-ի Լիազորված վարորդի սթափության վիճակի զննման ակտը կամ այդ փաստը հաստատող այլ պատշաճ փաստաթուղթ:

9.2.4. Տուժողի ՏՄ-ին պատճառված վնասի համար պատասխանատու անձի/մեղավոր վարորդի տվյալները և տեղի ունեցած պատահարին մասնակից մյուս տրանսպորտային միջոցի (միջոցների) վերաբերյալ իրեն հայտնի տվյալները (ավտոմեքենայի մակնիշը, հաշվառման համարանիշը, գույնը և այլն):

9.2.5. ԱՊՊԱ օրենսդրության համաձայն հաշվարկված վնասի չափը և վնաս պատճառած անձի մեղավորությունը հավաստող փաստաթղթեր:

9.2.6. ԱՊՊԱ օրենսդրության համաձայն՝ Տուժողին ԱՊՊԱ գործընթացի շրջանակներում Ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում–ծանուցումը և վճարման փաստը հաստատող ապացույցը: Եթե Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջի քննության շրջանակներում նշանակված փորձաքննության արդյունքում փոխվում է Լիազորված վարորդի մեղավորությունը, և վերջինս պատահարում դառնում է մեղավոր, ապա սույն Պայմանների իմաստով տվյալ դեպքը չի համարվում ապահովագրական պատահար:

9.2.7. Պետական իրավասու մարմնի կողմից տրված կամ կազմված պատահարի մասին արձանագրությունը (եզրակացությունը):

9.2.8. Առկայության դեպքում՝ քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը, որոշման հիմքում ընկած փաստաթղթերը,այդ թվում՝ դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, ցուցմունքներ, կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

9.2.9. Պատահարի առաջացման պատճառների փորձագիտական եզրակացությունը:

9.2.10. Ապահովագրողի գրավոր պահանջով ցանկացած այլ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է ապահովագրական գործի քննության համար:

9.2.11. ԱՊՊԱ օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթղթեր:

9.3. Եթե առկա լինեն այնպիսի հարգելի հանգամանքներ, որոնք կարող են անհնարին դարձնել ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից Պայմանների 9.1 կետում նշված ժամկետում համապատասխան փաստաթղթերի ներկայացումը, ապա վերջինն այդ հանգամանքների մասին պարտավոր է, մինչև այդ ժամկետի լրանալը, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին՝ ներկայացնելով անհնարինությունը հիմնավորող ապացույցները: Նշված հանգամանքների մասին սահմանված ժամկետում և կարգով տեղեկացված չլինելու կամ դրանք հարգելի չհամարելու դեպքում Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցումը:

9.4. Պայմաններով նախատեսված համապատասխան անձի կողմից հայցային դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի վրա Ապահովագրողի համապատասխան աշխատողը գրառում է կատարում ստացման ամսաթվի մասին:

9.5. Եթե պատահարի գծով առկա է քաղաքացիական, քրեական կամ վարչական գործ/վարույթ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի/վարույթի ելքից, ապա հատուցման որոշման կայացման ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործի/վարույթի ավարտը:

9.6. Քաղաքացիական, քրեական կամ վարչական գործ/վարույթ հարուցված լինելու դեպքում Տուժողի ՏՄ-ին պատճառված վնասի չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ/վարույթ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում Ապահովագրողի կողմից մատնանշած համապատասխան որակավորում և/կամ իրավասություն ունեցող փորձագետի եզրակացությամբ, եթե Ապահովագրողը չի ընդունել ԱՊՊԱ գործընթացում կազմված փորձագետի եզրակացությունների արդյունքները:

9.7. Ապահովագրական պատահարի առաջացման պատճառները պարզելու, ինչպես նաև Տուժողի ՏՄ-ին պատճառված վնասի չափը որոշելու նպատակով Ապահովագրողը կարող է իր հաշվին նշանակել փորձաքննություն: Ապահովադրի, Տուժողի կամ Լիազորված վարորդի կողմից տվյալ փորձաքննության անցկացմանը խանգարելու կամ դրանից հրաժարվելու դեպքում Ընկերությունն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը:

9.8. Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը որոշում է կայացնում հայցային դիմումի բավարարման կամ մերժման վերաբերյալ:

9.9. Հայցային դիմումի բավարարման դեպքում Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է տվյալ հայցի կարգավորման վերաբերյալ որոշման կայացումից հետո 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:

9.10. Ապահովադիրը և Տուժողը կրում են իրենց կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի, ներառյալ՝ պատճենների, ոչ հավաստի և կեղծ լինելու բոլոր բացասական, այդ թվում՝ իրավական հետևանքները:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովադիրն իրավունք ունի.

10.1.1. Ապահովագրողից պահանջել վերջինիս պետական գրանցման և սույն Պայմանների 1.3. կետով նախատեսված դասով գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

10.1.2. Ապահովագրողի հետ հարաբերություններում հանդես գալ ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով:

10.1.3. Պայմանագրի կորստի կամ վնասվածքի դեպքում ստանալ Պայմանագրի կրկնօրինակը:

10.2. Ապահովադիրը պարտավոր է.

10.2.1. Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտականությունները:

10.2.2. Մինչև Պայմանագիրը կնքելը ծանոթանալ Պայմաններին:

10.2.3. Պայմանագրի և Պայմանների մասին տեղեկացնել Լիազորված վարորդին կամ ՏՄ-ի շահագործման/պահպանման մեջ շահագրգռվածություն ունեցող այլ անձանց մինչև ՏՄ–ն նրանց հանձնելը: Նշված անձանց կողմից Պայմանագրի և Պայմանների պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը դիտվում է որպես Ապահովադրի կողմից Պայմանագրի և Պայմանների պահանջների էական խախտում:

10.2.4. Պայմանագրում նշված կարգով և ժամկետներում վճարել Պայմանագրով սահմանված ապահովագրավճարը:

10.2.5. Պայմանագրի կնքման ժամանակ հայտնել կամ նշել անհրաժեշտ և ստույգ տվյալներ ՏՄ-ի վերաբերյալ, որի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրվում է:

10.2.6. Ապահովագրողին անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր ձևով հայտնել Պայմանագիրը կնքելիս տրամադրված տեղեկատվության՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին:

10.2.7. Ապահովագրության օբյեկտի վերաբերյալ նույն ռիսկից մյուս բոլոր գործող ապահովագրության պայմանագրերի առկայության մասին անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին:

10.2.8. Պատշաճ ձևով կատարել Ապահովագրողի կողմից տրված ցուցումները, ինչպես նաև Պայմանագրով և Պայմանների այլ դրույթներով Ապահովադրի համար սահմանված պարտավորությունները:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի.

10.3.1. Պայմանագիրը կնքելուց առաջ պահանջել ՏՄ-ի հետ կապված համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաև Ապահովագրական ռիսկի փոփոխության մասին իմանալուց հետո Ապահովադրից պահանջել 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

10.3.2. Պայմանագրին կից հավելվածներ և/կամ համաձայնագրեր կնքելիս Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում/համաձայնագրում հաշվարկված գումարի չափով:

10.3.3. Պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ դադարեցնել, եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ապահովադիրը Պայմանագիրը կնքելիս կամ ապահովագրական գործի քննության ժամանակ Ապահովագրողին ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող կամ ապակողմնորոշիչ կամ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ՝ պատահարի տեղի ունենալու և դրա հետևանքով հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Եթե Պայմանագրի կնքումից հետո պարզվել է, որ Ապահովադիրը սուտ կամ իրականությանը չհամապատասխանող կամ ապակողմնորոշիչ կամ կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ է հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության վրա ազդող հանգամանքների վերաբերյալ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագիրը միակողմանի վաղաժամկետ լուծել՝ որպես Ապահովադրի կողմից թույլ տրված Պայմանագրի էական խախտում, և կիրառել Պայմանների 7.1.8 կետով նախատեսված իրավական հետևանքները:

10.3.4. Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին Պայմաններով սահմանված կարգով հայտնելով Ապահովադրին:

10.3.5. Ապահովագրական գործընթացի շրջանակներում լուսանկարել Տուժողի ՏՄ-ն, ինչպես նաև դիմել փորձագետներին (այդ թվում՝ արտասահմանյան)՝ Տուժողի ՏՄ-ի զննում և/կամ հետքաբանական փորձաքննություն անցկացնելու և/կամ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և/կամ պատճառված վնասի չափը գնահատելու համար:

10.3.6. Պահանջել ներկայացնել Տուժողի ՏՄ-ն հետվթարային վիճակում և այնպիսի Պայմաններում և/կամ տարածքում, որը հնարավոր կդարձնի ՏՄ-ի պատշաճ և ամբողջական զննումը և/կամ հետքաբանական փորձաքննության անցկացումը: ՏՄ-ն պետք է ներկայացվի Տուժողի կողմից Ապահովագրողի և/կամ փորձագետների սույն կետով նախատեսված համապատասխան գրավոր կամ բանավոր պահանջը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

10.3.7. Իրավասու պետական մարմիններից կամ Ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետող այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև պահանջել Ապահովագրական պատահարի հետ կապված այլ տվյալներ:

10.3.8. Կասեցնել ապահովագրական հատուցման գործընթացը Ապահովագրողին անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ ստանալու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողություններ իրականացնելու համար:

10.3.9. Մերժել ապահովագրական հատուցում վճարելը, եթե ապահովագրական հայտի կարգավորման գործընթացում Ապահովագրողին չեն ներկայացվել Պայման-ներով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, կամ հնարավոր չի եղել ձեռք բերել պատահարի հետ կապված Ապահովագրողին անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման իրականացման վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու համար, ներառյալ՝ տվյալ հայտի գծով Ապահովագրողի կողմից նշանակված փորձաքննության իրականացման անհնարին լինելու կամ փորձաքննության անկատար մնալու դեպքերը:

10.3.10. Պահանջել վերադարձնելու արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումը ամբողջությամբ կամ դրա մի մասը, եթե վճարումից հետո ի հայտ են եկել ապահովագրական հատուցման վճարումը մերժելու կամ նվազեցնելու՝ Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:

10.3.11. Օգտվել Պայմանագրով և Պայմանների այլ դրույթներով նախատեսված իրավունքներից:

10.4. Ապահովագրողը պարտավոր է.

10.4.1. Մինչև Պայմանագիրը կնքելը, տրամադրել Պայմանները Ապահովադրին՝ ծանոթանալու համար: Ապահովագրողը պարտավոր է՝ Պայմանագիրը կնքելիս ապահովել Ապահովադրի կողմից Պայմաններին մատչելի եղանակով և ամբողջապես ծանոթանալու հնարավորությունը:

10.4.2. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին տրամադրել Պայմանագրի և Պայմանների մեկական օրինակ, եթե Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով՝ երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

10.4.3. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում կայացնել պատճառաբանված որոշում և հնգօրյա ժամկետում առաքել Ապահովադրին՝ Պայմանների 11.3 կետով նախատեսված ծանուցման եղանակներից որևէ մեկով:

10.4.4. Պայմանագրի Կողմերը պարտավոր են չհրապարակել և/կամ երրորդ անձանց չտրամադրել իրենց հայտնի դարձած առևտրային, բժշկական, ֆինանսական, ապահովագրական և ՀՀ օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ

տեղեկություններ, որոնք հայտնի են դարձել իրենց հարաբերությունների արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

10.5. Պայմանների 8-րդ, 9-րդ գլխով և 10.2. կետի բոլոր ենթակետերով և 10.3.6. կետով սահմանված ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄԸ և/կամ ՉԿԱՏԱՐՈՒՄԸ և/կամ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐՈՒՄԸ կարող է հիմք հանդիսանալ ապահովագրական ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ համար:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Պայմանագրում փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր համաձայնագիր (հավելված) կազմելու միջոցով կամ Պայմանների 6.3. կետով սահմանված եղանակներից որևէ մեկով:

11.2. Պայմանների իմաստով Կողմերի կողմից միմյանց ուղարկված բոլոր ծանուցումները, որոշումները և գրությունները (այսուհետ միասին՝ Ծանուցում) համարվում են պատշաճ ծանուցված (առաքված), եթե կատարվել են հետևյալ եղանակներից որևէ մեկով.

11.2.1. Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով:

11.2.2. Ծանուցումը ուղարկվել է բջջային հաղորդագրությամբ՝ Պայմանագրում կամ Ապահովադրի և/կամ նրա լիազորված անձի կողմից տրամադրված այլ փաստաթղթի մեջ (հայցային դիմում, հայտարարություն, և այլն) նշված հեռախոսահամարին:

11.2.3. Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

11.3. Վերոնշյալ հասցեների և/կամ Պայմանագրի կողմերի տվյալների (հասցե, հեռախոսահամար, բանկային տվյալներ և այլն) փոփոխության դեպքում Կողմերը պարտավոր են այդ մասին փոփոխությունից հետո ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնել միմյանց: Եթե Ապահովագրողը չի տեղեկացվել հիշյալ փոփոխությունների մասին, ապա Ապահովադրին բոլոր Ծանուցումները ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են պատշաճ առաքված (հանձնված), իսկ Ապահովադիրը՝ պատշաճ ծանուցված, անկախ փաստացի ծանուցված լինելու հանգամանքից: Նման դեպքում Ծանուցման սկիզբ է համարվում դրա ելքի ամսաթիվը, և Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում բացասական հետևանքների համար:

11.4. Պայմանագրի և Պայմանների դրույթների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին:
11.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն երկկողմանի կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

12. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

12.1. Կողմերն ազատվում են Պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, և որն անմիջականորեն հանգեցրել է պայմանագրային պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարման անհնարինությանը: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:
12.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս Կողմին առնվազն 15 օր առաջ տեղյակ պահելով:
12.3. Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա անհաղթահարելի ուժի ազդեցությունը պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

13. **ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

13.1. Պայմանագրի և Պայմանների շրջանակներում ու դրանց գործողության ընթացքում ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունները սկսվելու օրվանից մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
13.2. Պայմանագրի և Պայմանների շրջանակներում ու դրանց գործողության ընթացքում ծագած վեճերի դեպքում Պայմանագրով չնախատեսված հարցերի կարգավորումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: